

Ա Խաղը աշխատ քննութ մկանի
.. ճարտար զիկը պիսոյ սփեռ

ԷՅԻԳԵՆԻԱՆ ՏԱՐԵՒՍՈՒՄ

ԵՐԿՐՈՐԴԻ ԳՐԱՆՈՂՈՒԹՅՈՒՆԻՒՆ
Ա ՌԱԶԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Օրեաս եւ Պիլադ

Օրեստ. Դէպ մահ է տանում մեր բռնած ուղին.

Մարում է հոգիս մեն մի քայլիս հետ:

Երբ Ապոլլոնին աղերսում էի

Ազատելու ինձ չար ողիներից,

Նա ինձ կենսուրախ, երկնային խօսքով

Յոյս ու ապաւէն խռոտացաւ կարծես—

Տալ ինձ օթևան Տաւրիսում իշխող

Սիրեցեալ քրոջ տաճարի ներսում:

Եւ տեսնում եմ արդ, որ ցաւերս համայն

Միայն կեանքիս հետ կարող են մարել:

Ի՞նչքան հեշտ է ինձ, որի սիրտն հոգին

Երկնային ձեռքով ճնշուած են, սեղմուած,

Զրկուիլ արեի լոյսից կախարդիչ:

Եւ թէ Ստրեսի թոռնիկներն անբախտ

Մարտի մէջ փառքով չեն պսակուելու,

Թէ պապերիս պէս, ծնողիս նման

Զերթ զոհի զուարակ ցաւով պիտ մեռնեմ,

Թո՞ղ այդպէս լինի: Լաւ է, որ այստեղ

Սեղանի առաջ զոհուեմ զիցուհուն,

Քան խուլ անկիւնում ազգակցի սրից

Թակարդում բռնուած խողխողուեմ զաղտնի:

Ո՞չ, մինչեւ այն ժամն ինձ հանգիստ թողէք,

Դուք, ստորերկրեայ անդուլ ողիներ,

Որ իմ արիւնոտ քայլերի հետքից

Արձակուած շան պէս բռնել էք, վազում:

Թողէք ինձ, շուտով ես ձեզ մօտ կըդամ:

Մեզ չի տեսնելու լոյսը ցերեկուայ.
 Դալար ու չքնաղ կանաչը երկրի
 Չունի մեզ հոմար ոչինչ դրաւիչ:
 Շուտով ներքեռում կլուտնեմ ես ձեզ.
 Գործ դրէք դուք ձեր հնարքներն համայն
 Մշտենջենական մուայլ մթան մէջ:
 Միայն քեզ Պիլադ դու, անմեղ ընկեր
 Զարած մեղքերիս ու աքսորանքիս,
 Ի՞նչ անսիրտ կերպով տանում եմ անժամ
 Դէպի մշտական աշխարհը ողբից
 Ինձ յոյս կամ երկիւղ միակ ներշնչող
 Կեանքդ կը լինի կտմ վախճանդ անպարտ:
 Պիլադ, Ո՞ւ ես պատրաստ չեմ քեզ նման Օրեսու
 Իջնել աշխարհն այն մութ ստուերների:
 Դէպ խաւար տանող արահետներից
 Ես գեռ յոյս ունեմ հիւսել մեր կեանքի
 Ուղին փրկութեան: Եւ մահուան մասին
 Զեմ էլ մոածում: Ականջ եմ դնում
 Ու լուռ սպասում ես աստուածների
 Տուած ցուցմունքին՝ մեղ պատրաստելու
 Ուրախ վախստեան ուղին կենսաբեր:
 Կուզես մահուանից վախեցիր կամ ոչ
 Անխուասփելին վրայ կը հասնի:
 Նոյն իսկ քրմուհին, երբ որ բարձրացնէ
 Զեռքը մահաբեր հատանելու մեր
 Գլխի գանգուրներ, նոյն իսկ այդ ժամին
 Քո և իմ կեանքի փրկութիւնից դատ
 Ուրիշ մոածմունք չպիտի տիրէ
 Յուտացող հոգուս:
 Քաջացիր հոգով: Այն կասկածներով
 Կորուսով ես միայն դու արագացնում:
 Ապոլլոն մեզի խոստմունք է տուել —
 Որ նրա քրոջ սուրբ օթեանում
 Յոյս ու ապաւէն է քեզ պատրաստած
 Երկմիտ չեն երբեք խօսքելն երկնայնոց,

Ինչպէս վհատուած, թշուառն է կարծում:
 Օրեստ. Զարարախտ կեանքի մռայլ ծածկոյթով
 Պատում էր արդէն մայրիկա իմ զլուխ.
 Այդպէս մեծացայ, հօրս ճիշտ նման.
 Լոիկ հայեացքով կշտամբանք էի
 և ու նորա հոմանու համար:
 Ա՛խ, ինչպէս յաճախ, երբ քոյրս ելեկտրան,
 Խորին դահլիճում նստած կրակի մօտ,
 Լալիս էր անվերջ դառն արցունքով,
 Խորտակուած սրտով ես վազում էի
 Նրա գիրկն ընկնում, ապշած աչերով
 Միշտ նրան դիտում: Սիրում էր պատմել
 Մեր մեծ հօր մասին. իմ՝ մէջ բորբոքում
 Նրան տեսնելու բուռն ցանկութիւն:
 Տենչում էի մերթ թռչել Տըոյա,
 Երբեմն էլ նրան մեր տնում տեսնել:
 Բայց ս՛խ, օրն եկաւ . . .

Պիլադ. Ո՛հ, թող զիշերով
 Դժոխքի ոզիք խօսեն այդ մասին.
 Անցեալ գեղեցիկ ժամանակների
 Մեզ յեշողութիւնն է արդ հարկաւոր
 Քաջ գործի համար նոր ուժ առնելու:
 Ընդարձակ երկրում անմաշ տստուածներն
 Մեծ կարիք ունեն քաջայաղթ մարդկանց,
 Որ իրանց գործերն անշեղ կատարուին:
 Դու էլ ես անշուշտ այդ մարդկանց թւում.
 Նոքա չթողին որ հօրդ ուղեկցես,
 Երբ նա ակամայ Օրքուս էր իջնում:
 Օրեստ. Ո՛հ, երանի թէ նրա հանգերձի
 Փեշից բոնելով զնայի անդարձ:
 Պիլադ. Քեզ յետ պահողներն հոգ են ունեցել
 Նաև իմ մասին: Զի չեմ իմանում
 Ինչ կըլինէի, թէ զու մեռնէիր:
 Զէ որ քեզ համար ու քեզ հետ միայն
 Փոքր հասակիցս ապրել եմ ու արդ

Կարող եմ ապրել: բայց դու մասնաւում ան
Օրեստ. Ո՞չ, մի յիշեցնիր

Օրերն այն սիրուն. երբ քո օթեանն է հյան
Ազատ վայր էր ինձ, երբ հայրդ ազնիւ ռամփից
Շոյում էր, գգւում կիսաթառամած
Ու մատղաշ պտուղն այնպիսի սիրով
Այնպիսի խելքով.—

Երբ դու միշտ ուրախ, միշտ կայտառ ընկերս,
Շուրջս նոր կեանքով թռչկոտում էիր,
Ինչպէս որ թեթև գոյնզոյն թիթեռնիկն
Մութ ծաղկի զլսով պտոյու է դալիս:
Հրճուանքը սրտիդ կաթեցնում էիր
Մեղմիկ հոգուս մէջ, ես մոռանալով
Վշտերս բոլոր քեզ հետ միասին
Արագ ընթացքով անձնատուր էի
Պատանեկական կեանքի հոսանքին:

Պիլադ. Այն ժամից միայն կեանքս սկսուեցաւ,
Երբ քեզ ջերմ սիրով սիրել սկսայ:

Օրեստ. Ո՞չ, ասա վշտերս, և դա ճիշտ կըլնի:
Իմ վիճակիս մէջ այն է սոսկալին,
Որ ես, իրուե մի ժանտախտից քշուած
Կրում եմ կրծքիս դաղտնի վիշտ ու մահ.
Երբ ոտ եմ դնում բախտաւոր մի վայր,
Իսկոյն ծաղկալի դեմքերը փիթթող
Փոխւում են մահուան դալուկ վշտերի:

Պիլադ. Եթէ շունչդ, Օրեստ, թոյն պարունակեր,
Առաջինն անշուշտ ես կըմեռնէի:
Սակայն միթէ ես լի չեմ շարունակ
Արի քաջութեամբ ու լուռ բերկրանքով:
Եւ սէրն ու հրճուանք մեծ մեծ դործերի
Թէ չեն անհրաժեշտ:

Օրեստ. Մեծ մեծ դործերի:
Յիշում եմ այս մեր ժամերն անցեալ,
Երբ մենք միասին որսի յետելից
Ապր ու ձորերով ալշա: ում էինք

Ու նախնեաց նման կրծքով ու բազկռվ
 Առւր ու մահակով հետեւում էինք
 Վայրի գաղանին որսալ տենչալով:
 Իրիկնադէմին ընդարձակ ծովի
 Դիւթիչ եղերքին նստատում էինք
 Իրար յենուելով, ու մեզմ ալիքներն
 Ատքներիս տակին լուռ խաղում էին.
 Ու մեր առաջին ձգուում էր աշխարհն
 Այնքան ընդարձակ, այնքան կախարդիչ:
 Ո՛չ, այն օրերին քանից անդամ
 Խլել եմ սռւերս բուռն տենչանքով:
 Ու ապագայի մեծամեծ զործերս
 Ինչպիսի թափով խռնուել են սրտումն
 Անթիւ, անհամար, ինչպէս գիշերուայ
 Աչքերը բոցոտ:
 Պիլադ. Անթիւ են, անվերջ գործերը բոլոր,
 Որ հոգին թափով ձգտում է անել:
 Մենք կուղենայինք կատարել զործեր
 Այնպէս մեծամեծ, որ սրանք միայն
 Երկար օրերի ընթացքումը լոկ
 Դառնում են իրօք մեծ ու զրաւիչ
 Եւ շատ ազգերի բաժին են լինում
 Լոկ բանաստեղծի քնարի շնորհիւ:
 Մեզ քաղցր է հնչում գործերն հայրենիւ
 Երբ երեկոյեան ստուերում նստած
 Պատմում է երգիչն բամբռան լարերով:
 Եւ մեր կատարած արարքները մեղ՝
 Այդպէս էլ նրանց գատարի է թւում:
 Վազում ենք անվերջ նրա յետեից,
 Ինչ որ մեր աչքից փախչում է արագ,
 Առանց նայելու մեր անցած ուղուն,
 Եւ հաղիւ նախնեաց հետքը քայլերի
 Նշմարում ենք մեր ստների տակին:
 Շտապում ենք միշտ նրանց ստուերի
 Հետքից բռնելով, որ հեռաստանում

Ոսկեայ ամպերով աստուածանման

Պսակ է դնում բարձր լեռների

Մեծ կատարներին, Ոչինչ չեմ սպասում

Միայն իւր մասին ես հոգո քաշողից:

Երկնայիններին փառք առուր դու սակայն,

Սիրելի ընկեր, որ քո միջոցով

Այդքան շատ գործեր նոքա գործեցին:

Օքեստ. Թէ նրանք մարդուն ուրախ հրճուալի

Գործ են պարզեւում: այնպէս որ չարիքն

Խւրայիններից յետ է վանում մարդ:

Մեծացնում է իւր թագաւորութիւնն

Ու ապահովում նրա սահմաններ—

Պէտք է որ յայնժամ շնորհակալ լինի,

Զի նրան աստուած տուել է կեանքի

Ամենաչքնաղ բարիքն առաջին:

Ինձ համար սակայն անմահք վճռեցին

Որ մորթող լինեմ իմ մեծայարդ մօր:

Ու իմ միջոցով վրէժ հանելով

Խայտառակ գործին խայտառակ կերպով,

Կորստեան անդունդ ինչ զլորեցին:

Հաւատա, նոքա այդ բոլոր բաներն

Ուղղել են թշուառ Տանտալի տան դէմ:

Ու ես, որ զմրախտ վերջինն եմ մեր տան,

Չպիտի մեռնեմ անմեղ ու պատուով:

Պիլաղ. Արդար աստուածներն հայրերի մեղքելն

Որդուց չեն հանում: բարի և կամ չար

Գործերի համար ամեն մէկն ունի

Արդար հատուցում: Մեզ աւանդաբար

Անցնում է ծնողաց ոչ թէ շար անէծք

Այլ լոկ սրտաբուխ բարի օրհնութիւնն:

Օքեստ. Կարծում եմ, որ մեզ օրհնութիւնը չեր

Որ այստեղ բերաւ:

Պիլաղ. Այդ դէպքում անշուշտ

Կամքն անդառնալի մեծ աստուածների:

Օքեստ. Այդ կամքն է, այս որ կորցնում է մեզ:

Պիլադ. Կատարիր, ինչ որ քեզ կըպատուիրեն
 Ու սպասիր միշտ: Ապոլոնի հետ
 Երբ որ միացնես բախտը նրա քրոջ,
 Նոքա երկուսով երբ Դելֆում ապրեն,
 Ազնիւ մարդկանցից յարգուած ու պաշտուած
 Զոյգն երանելի այդ գործի համար
 Ողորմած կերպով քեզ հետ կը վարուի:
 Նոքա կը փրկեն ու կազատեն քեզ
 Ստորերկրայնոց անարդ ձեռքերից—
 Նոցանից ոչ ոք չի համարձակուի
 Մօտենալ մեր այս սրբազան վայրին:
Օրեստ. Գոնէ ես այստեղ հանդիսա կը մեռնեմ:
Պիլադ. Ես բոլորովին այլ բան եմ մտածում.
 Անցեալն ու գալիքն անյաջողութեամբ
 Չէ, որ կապեցի ու այժմ խաղաղ
 Չգտում եմ մեկնել: Վաղուց է կուցէ
 Մեծ աստուածների ժողովումի մէջ
 Պատրաստում է մի մեծ գործի խորհուրդ:
 Այս մարդակորոյս ափերը դաժան
 Տենչում է սրտով թոշնել Դիանան.
 Այդ գործը սիրուն մենք պիտ կատարենք,
 Որի համար և ցուցմունք կստանանք:
 Տեսնում ես ահա այդ գործի համար
 Եկել ենք հասել դուռը դիցուհու:
Օրեստ. Հազուազիւտ հնարքով ի մի հիւսեցիր
 Անձիդ տենչանքներն ու աստուածների
 Խորհուրդներն անյայտ:
Պիլադ. Էլ ինչ հմտութիւն, թէ որ մենք նրանց
 Զպիտի լինենք լսող ունկընզիր:
 Նրանք շատ անզամ գործի են կանչում
 Ու ծանր գործի յանցաւոր, բայց և
 Մի ազնիւ մարդու, ու յանձնում նրան
 Ծանր անկարելի գործեր կատարել:
 Յաղթում է դիւցազն ու քաւելով իւր
 Մեղքերը գործած, յարդանք է ստանում

Ամբողջ աշխարհից ու աստուածներից։

Օրեստ. Թէ որ ապրելու, գործելու համար

Որոշուած եմ ես, թող ծանր ճակտէս

Փարատէ Աստուած՝ մտքիս շփոթմունք,

Որ մօրս արիւնով ցօղած շահիզով

ինձ մահէ տանում։

Թող նա չորացնի մօրս վէրքերից

Անդադար ցայտող աղբիւրն անսպառ,

Որ թաղում է ինձ արեան շիթերով։

Պիլադ. Հանգիստ կաց մի քիչ չարիքն աւելի

Շատացնում ես դու ու քո վրայ առնում

Չար ոգիների պաշտօնն ահուելի։

Հանգիստ կաց. թոյլ տուր մի քիչ մտածեմ,

Մեր այս ձեռնարկած գործը զժուարին

Միացեալ ուժի պէտք ունի խստիւ։

Ես քեզ կը կանչեմ, և մենք երկուսով

Յանդուգն քոյլով կը զիմենք անվախ

Գործն աւարտելու։

Օրեստ. Մեր Աղիսեսի խօսքերն են կարծես։

Պիլադ. Մի ծաղրիր դու ինձ. մեզնից ամեն ոք

Պիտի իւր լնտրած հերոսն ունենայ,

Որին նայելով Ոլիմպի ուզին

Բռնէ ու գնայ։ Թող խոստովանուեմ,

Ես կարծում եմ, որ խորամանկութիւնն

Ու խելօքութիւնն երբէք զնաս չեն

Յանդուգն դործի ձեռնամուխ մարդուն։

Օրեստ. Ինձ համար չունեն բարձր զին նոքա

Որոնք շիտակ ու անվեհեր չեն միշտ։

Պիլադ. Այդ իսկ պատճառով քեզանից չէի

Խորհուրդ ցանկանում։ Ակսուած է գործն։

Մեր պահնորդներից ես մինչեւ հիմա

Անհրաժեշտ բաներ խիստ շատ իմացայ։

Աստուածանման մի օտար աղջիկ

Արգելք է զնում այն անտանելի

Արեան օրէնքին ու աստուածներին

Խունկ ու աղօթքով նուէր է բերում
իւր սիրտն անարատ: Բարի աղջկան
Սիրում են ամենքն ու ենթազրում
թէ ծագում է նա ամազոններից,
Փախել է եկել, որպէս զի խոյս տայ
Վրան ծանրացած մի մեծ չարիքից:

Օրեստ. Բայց իմ կարծիքով նրա լուսաւոր
Զօրութիւնն այլ ևս ոյժ ու կար չունի,
Երբ որ ոճրագործն մօտիկ է արդէն,
Որին զիշերուայ խաւարի նման
շում է, պատում անէ ծքն ընտանի:
Եւ արեան տենչանքն հին սովորութեան
Քանդում է շղթայք մեղ կորցընելու:
Մեզի կըսպանէ արքայի վայրի
Միտքն ու մտածմունք: Ոչինչ չի կարող
Այն աղջիկն անել, երբ որ զայրացած
Մռայլ է արքան:

Պիլադ. Մեր բախտն է, որ նա կին է, զի նոյն իսկ
Լաւագոյն մարդու վարժում է հոգին
Խստութիւնների, և ինչից առաջ
Զգւում էր, քաշւում, այժմ իւր համար
Օրէնք է շինում: Դաժան է դառնում
Նա սովորոյթից և համարեա թէ
Անձանաշելի: Սակայն կինարմատն
Երբեք չի փոխում իւր խօսքը տուած:
Թէ բարի և թէ չար գործերի մէջ
Կարելի է միշտ յոյս զնել կնոջ:
Մա. գալիս է ահաւ զէշ, մենակ թող մեզ:
Մեր բախտն ու վիճակ ու մեր անուններն
Նրան չեմ ասի ես իսկոյն և եթ:
Դնա՛, և նախ քան նա քեզ չետ խօսի,
Ես քեզ անպատճառ կը տեսնեմ դարձեալ:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ ՀՅԱ ՊԱՌ

Իմիզենիա, Պիլադ

ԻՖԻԳԵՆԻԱ. Ո՞վ ես, ո՞րտեղից, անո՞ւ, ով եկո՞ր.

Թւում է, թէ դու տւելի շուտով
Յոյնի ես նման քան ակիւթացու:

(Նրա շղթանիը վերցնում է)

Ծանր է իմ տուած քեզ ազատութիւն,

Ո՞չ, երանի թէ ձեզ սպառնացող

Չարիքից փրկեն աստուածներն անմահ:

Պիլադ. Օ՛, քաղցրիկ հնչիւն մայրենի լեզուի

Սիրելի դու ձայն այս օտար երկրում:

Աչերիս առաջ տեսնում եմ դարձեալ

Ես խեղճ բանտարկեալո, հայրենի երկրիս

Նաւահանգստի լեռներ կապուտակ:

Ուրախացիր դու, որ ես էլ քեզ պէս

Յոյն եմ ծագումով: Ես ինձ մոռացայ,

Ինչքան էլ որ քեզ ես կարիք ունեմ.

Ու հիանալի տեսքը քո չընաղ

Դիւթեց իմ հոգին:

Եթէ քեզ բախտից հրամայուած չէ

Լոռւթիւն պահել, ո՞չ, առա շուտով՝

Մեր ո՛ր ցեղերից հաշւում ես դու քո

Աստուածանման ծագումի չքնաղ:

ԻՖԻԳԵՆԻԱ. Դիցուհու ձեռքով ընտրուած: Մրբացած

Քրմուհին է, որ խօսում է քեզ հետ:

Թող զա քեզ համար բաւական լինի,

Այժմ ասա դու ինձ, ո՞ր չարբախտ վիճակն

Քեզ ընկերոջդ հետ այս կողմն է ձդել:

Պիլադ. Հեշտութեամբ կառեմ մեզ միշտ ուղեկցող

Չարիքի մասին: Եւ երանի թէ

Դու էլ հեշտութեամբ կարողանայիր

Մեղի կենդանի նշան պարզեել

Ակնկալութեան, ով աստուածային:

Կրետայից ենք մենք, Աղբաստի որդիք,
 Մեր մէջ փոքրն եմ ևս, անունս է կեֆալ,
 Նա Լաօդամա, աւազը մեր տան:
 Ունէինք նաև մի միջնակ եպայր
 Դաժան և վայրի բնաւորութեամբ,
 Որ մանկութիւնից, գեռ խաղերի մէջ
 Բաժան էր մեզնից, մուայլ կռուարար:
 Քանի Տրոյեայի պատերի առաջ
 Կռւում էր մեր հայրն իւր աշեղ զօրքով,
 Հեզ խոնարհ կերպով հետեւում էինք
 Մեր մօր խօսքերին. բայց երբ աւարով
 Հայրս տուն դարձաւ ու շուռով մեռաւ,
 Խակոյն մեր տան մէջ վէճեր բարձրացան
 Ժառանգի համար. ևս հակուած էի
 Լաօդամասին, որն ևս ստանեց
 Մեր միւս եղբօրն: Արդ չար ողիներն
 Արիւնի համար հետեւում են խիստ
 Եղբայրասպանին: Բայց Դելֆեան աստուածն
 Ուղարկում է մեզ վայրի այս ափերն
 Մեծ յոյսեր տալով: Նրա մեծ քրոջ
 Տաճարում ասաց, երկնառաք ձեռքից
 Մենք ազատութեան յօյսին սպասենք:
 Այժմ շղթայուած այստեղ ենք բերուած
 Ու քեզ յանձնուած, զերթ զոհ զիցուհուն:
 Մնացածն արդէն քեզնից է կախուած:
 Իֆիզենիա. Ընկճուեց Տրովագան, ասա՛ մի հաստատ:
 Պիլադ. Հա, ընկաւ Տրոյեան: Բայց սպատիր մեզ.
 Յոյց տուր մեզ շուտով աստծուց խոստացուած
 Մեզ քո փրկութիւն: Խղճա իմ եղբօրս:
 Օ՛, մի զթոտ խօսք ասա շուտ նրան:
 Ու թէ նրա հետ խօսքի բռնուես,
 Խնայիր նրան, ևս խնդրում եմ քեզ:
 Զի ուրախութեամբ ու զաւ վշտերով
 Նաև յուշերով նրա սիրտն հոգին
 Բռնուում է շուտով ու կարծես մոլի

Բանդագուշանքի գերի է դառնում:

Ու ազատասեր գեղեցիկ հոգին:

Աւար է լինում չար ողիներին:

Իֆիզենիա. Մոռացիր մի քիչ քո դժբախտութիւն

Ու քո խօսքերով տուր ինձ գոհութիւն:

Պիլադ. Արի յոյների ամբողջ զօրութեան

Մի տասնեակ տարի քաջ պիմազըելով,

Ընկճուեց Տրոյեան, փոշու մէջ կորաւ,

Ու էլ կանգնելու յոյս չկայ երրէք:

Բայց յոյն քաջերի շատ գերեզմաններ

Դեռ մեղ շատ երկար յիշեցնել կըտան

Բարբարոսների ափերն ամայի:

Ընկաւ անդ նաև հսկայ Աքիլլեսն

Իւր հաւատարիմ քաջ ընկերոջ հետ:

Իֆիզենիա. Դուք էլ, ով քաջեր, կեր եղաք փոշուն.

Պիլադ. Էլ չեն տեսնելու ափերն հայրենի

Ոչ Պալամիդես, ոչ կրտսերն Այաքս:

Իֆիզենիա. (ինքն իրան) Բայց հօրս մասին լոռում է նա դեռ.

Այս, ողջ է նա կը տեսնեմ նրան,

Ո՛չ, յոյս ունեցիր, սիրելիդ իմ սիրու:

Պիլադ. Թշնամու սրից մահ գտնողներին

Հազար երանի ու փառք անվախճան,

Զի դարձողներին հրճուանքի փոխան

Մահուան սարսափներ ու տխուր վախճան

Աւ բաժին ընկաւ չար թշնամական

Աստուծոյ կողմից: Միթէ մարդկանցից

Բան չեք իմացել: Պատահած անլուր

Գործերի համբաւն աշխարհ է բռնել:

Գաղտնիք է միթէ, քեզ, ով քրմուհի,

Միկենի գլխին եկած մեծ չարիք,

Որ աշխարհ լցրեց իւր լաց ու կոծով:

Կլիտեմնեստան արքայ ամուսնու

Վերադարձի օրն խարդախ էգիստի

Հետ միաբանած մորթում է նրան:

Հա՛, տեսնում եմ ես, պատւում ես դու տունն.

Այդ արքայական, ու քո կռւրծքդ իզուր ազգական
Զանք է դործ գնում անոպասելի
Ու կորստաբեր խօսքից ազատուելու
Միթէ դու այդ տան ազդական ես մօտ
Կամ այդ քաղաքում նրանց հարևանութեան առ ալ
Ծնուած մի ազգիկ: Մի ծածկիր ինձնից:
Ու մեզք մի հաշուիր, որ այդ սոսկալի
Բօթին սուրհանդակ ես եղայ նախ քեզ անձնական
Իֆիզենիա. Այդ ծանր աղետն ինչպէս գործուեցաւ:
Պիլադ. Իւր գալատեան օրնու երբ բազանիսից

Կազդուրուած խաղաղ դուրս եկաւ արքան,
Իւր հազուստեղէնն ամուսնու ձեռքից անդադար
Յանկացաւ առներ կորստաբեր կինն ամա արի
Ճարպիկ հնարքով ծալքերով հարուստաւուշ զալ
Մի ըզգեստ ձգեց նրա ուսերին,
Փառաւոր գլխին, և մինչդեռ արքան մէջ զ այլ
Ճիդ էր գործ գնում ցանցից դուրս գալու, թ զ
Դաւաճան էղիստ սպանեց նրան:
Այդ կերպ փաթաթուած՝ մեռելների մօտ
Գնաց այդ արի մարզը փառաւոր
Իֆիզենիա. Սակայն փոխարէնն ինչպիսի մեծ վարձ

Ստացաւ էզիստ:
Պիլադ. Նրա տէրութիւնն ու նրա մահին, բռնզար զ
Որ առաջուց էլ իրանն էր արդէն:
Իֆիզենիա. Այդ ամօթալի ոճիրիս պատճառ մինազ ալ
Ուրեմն մոլի հրճուանքն էր անշուշտ:
Պիլադ. Ու հին վրէժի մի խոր դգացում:
Իֆիզենիա. Ի՞նչ եղանակով վիշտ էր պատճառել նյուն
Արքան թագուհուն:

Պիլադ. Մի ծանր գործով, որ եթէ լինէր
Սպանչին ներում նա կարգարանար.
Արքան գրաւեց նրան դէպ՝ Ալիս առ մասն մայլի
Ու այնտեղ զոհեց իւր աւագ դստեր՝ յնդարադի
Իֆիզենեային մեծ Դիանայի ճամադամ ուն
Մաքուր սեղանին, զրթունաց ուղին առ մասն մայլի

Բոնուած էր կապուած ուժգին հողմերի
Մոլի ընթացքից. և իջիգենիան
Ընկաւ որպէս զոհ յունաց փրկութեան:
Աշա այդ արարքն, ասում են մարդիկ,
Այնքան խոր կերպով վիշտ էր պատճառել,
Որ իշխանուհին յանձնել է իրան
Էզիստի կամքին և իւր ամսւսնուն
Սեփական ձեռքով մահու կորստեան
Ցանց է պատրաստել:

Ի Փիգենիա. (ծածկունլով) Հերիք է այդ չափն, յետոյ կը-
տեսնուենք:

Պիլադ. (մենակ) Աբքայական տան վիճակով կարծես
Սա խոր խոցուեցաւ: Բայց ով էլ լինի,

Ալքային անշուշտ ճանաչում է լաւ,

Ու բարձր տնից մեզ համար կարծես

Այստեղ է ծախուած: Խաղաղուիր, սիրո իմ,

Ու թոյլ տուրոյ որ մենք մեզի ժպտացող

Յուսոյ աստղիկին ուրախ քաջութեամբ

Դուրս գանք ընդառաջ:

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՃԵՍԱՐԱՆ

Իմիգենիա եւ Օրես

Ի Փիգենիա. Անբախտ, քո շղթան ահա քանդեցի

Իրեւ աւելի չար բախտի նշան:

Սուրբ վայրի տուած քո ազատութիւնն

Ահեղ հիւանդի վերջին լուսաւոր

Ժպիտն է կեանքի, աև գուշակ մահուան:

Բայց գեռ չեմ կարող ու չեմ ասելու

Թէ կորած էք դուք: Ա՝ իս, ես ինչ սրտով

Սպանիչ ձեռքով ձեզ մահուան ձօնեմ:

Քանի զիցուհու քրմուհին եմ աստու

Ոչ ոք չի կարող զիպչել ձեր կեանքին:

Բայց թէ յետաձգեմ պարտքիս կատարում
 Որ ցասկոտ արքան պահանջ է դնում,
 Ապա նա կընտրէ իմ նաժիշաներից
 Մէկին ինձ յաջորդ, ու այն ժամանակ
 իմ ձեզ օգնելու ցանկութիւնս անհուն
 ի չիք կը դառնայ:
 Ո՞չ, առաքինիդ իմ հայրենակից.
 Հայրենի ծածկի մինչև իսկ ծառան
 Այս օտար երկրում քաղցր է մեզ համար:
 Ինչ մեծ հրճուանքով ու լի օրհնութեամբ
 Պէտք է լնդունեմ ես ձեզ, ով քաջեր:
 Չեր դիմագծերն յիշեցնում են ինձ
 Տեսքն այն քաջերի, որ ծնողներէս
 Սովորել էի յարգել ու պատուել.
 Ու ձեզ տեսնելով սիրտը լնչալիսի
 Նոր ու դեղեցիկ յուսով է յուզւում:
 Օղեստ. Արդեօք ինչ մաքով ծածկում ես դու քո
 Անունդ ու ծագում:
 Իջիզենիա. Կիմանաս. բայց այժմ զու լրութիւն տուր
 Ինչ որ քո եղբայրդ ինձ պատմեց կիսատ.
 Պատմիր դու նոցա վախճանն ապաբախտ,
 Որոնք Տրոյեայից զառնալով դէպ տուն
 Անասանելի գաժան վիճակի
 Զոհ եղան իրանց տների շեմքում:
 Թէպէտ շատ փոքրուց ինձ այս ափ բերին,
 Բայց յիշում եմ դեռ, ինչ վախկոտ աչքով,
 Ի՞նչ հիացմունքով զիտում էի ես
 Քաջ հերոսներին, որք ուղի լնկան,
 Ու կարծես Ոլիմպ պարզուեցաւ ամպից
 Եւ մեր քաջ նախնեաց պատկերներն հսկայ
 Ղրկեց ի սարսափ մեծ Խլիոնին.
 Եւ բոլորի մէջ փառաւորագոյնն
 էր Ազամեմնոն. Ի՞չ ասա, արդեօք
 Բնկան նա կնոջ ու նենդ էզիստի
 Դաւոտ թակարդից իւր տուն մտնելիս:

Օրեստ. Ճիշտ այդպէս.

Իֆիզենիա. Օ վայ քեզ, գմբախտ Միկեն:

Ռւբեմն այդպէս. Տանտալի թռոներն
Բուռն ու մոլեզին վայրի ձեռքերով
Ցանեցին անէծք անէծքի վրայ:
Ինչպէս վայրի խոտն շարժում է հասկերն
Ամայի դաշտում ու հագար տեսակ
Մերմեր շաղ տալիս, նոյնպէս էլ նոքա
Իրանց ծռոներին մօտիկ ցեղակից
Ծնան մորթողներ մշտնջենական
Մուլի կրքերի աղմօւկի համար:
Բա՛ց արա, պատմիր, ինչ որ քո եղբօր
Խօսքն արագապէս ծածկեց քօղարկեց
Սարսափի մթին խաւարն ահարկու:
Ինչպիսի՞ հնարքով մահից խուսափեց
Հոյակապ տոհմի բողբոջը վերջին,
Միրասուն տղան, Օրեստն ապարախտ:
Որ իւր անմեղ հօր վրէժ պիտ հանէր:
Արդեօք նոյնպիսի վախճանով մեռաւ
Աւերի դաւող ցանցերում բռնուած:
Փրկուած է արդեօք, ապրում է գեռ նա,
Ուր է ելեկրան:

Օրեստ. Ապրում են նոքա.

Իֆիզենիա. Զքնաղ արեգակ, ամենասիրուն

Շողերդ ոսկի տուր ինձ ձօնելու
Եռվիսի գահին իմ շնորհակալիս,
Զի թշուառ եմ ես, համբ ու անկարող:

Օրեստ. Թէ արքայական այդ բարձր տան հետ
Կապուած ես մօտիկ ազգակից կապով—
Ինչպէս քո սիրուն հրճուանքն է ասում իմասու
Զսպիր քո հոգին ու հանդարտ մնա՛,
Զի ու բախ մարդուն գմուար է ոտատիկ զմբառ
Նորից վշտի ծով սուզուել, խորանալ:
Ինչպէս կերևայ, դու դիտես միայն
Ագամեմնոնի մահը տարաբախտ:

Իֆիզենիա. Զնի՞ թէ էլի ուրիշ բաներ կան:
Օրեստ. Սարսափի միայն կեսն ես իմանում.
Իֆիզենիա. Բայց դու ասացիր, ողջ են էլեկտրան
Ու նաև օրեստն.

Օրեստ. Ոչինչ վախ չունի՞ս կիտեմնիստրայից:
Իֆիզենիա. Նրան չեր փրկի ոչ յոյս, ոչ սարսափ.
Օրեստ. Յոյսից էլ վաղուց նա պոկ է եկել:
Իֆիզենիա. Անձնասպա՞ն եղաւ, մոլեգին կերպով

Զղալով արարքն թափեց իւր արիւն:

Օրեստ. Սեփական արիւնն մահ տուեց նրան:
Իֆիզենիա. Պարզ խօսիր, որ ես շատ շմտածեմ.

Տարտամ, անորոշ այդ կացութիւնն ինձ

Հազարապատիկ շատ է շարչարում

Ու վախկոտ դլուխս մռայլ մոքերիս

Դարձնում է գերի:

Օրեստ. Տեսնում եմ արգէն մեծ աստուածների

Կամքն է ահարկու, որ թշուառականս

Այնպիսի գործի սուրհանդակ լինեմ,

Որ այնքան սիրով կուզէի թաղել

Մռայլ գիշերուայ լուռ ու անշշուկ

Աւ մթութեան մէջ: Կամքիս հակառակ

Ամեն բան կասեմ հրապուրուելով

Շնորհալի բերնէդ, որը միայնակ

Կարող է ինձնից նոյնիսկ տիրալի

Բաներ դուրս պոկել:

Հօր մահից յետոյ էլեկտրան փրկեց

Պահեց իւր եղբօր. բարի Ատրոֆիոսն՝

Արքայի փեսան ընդունեց նրան

Էարեհաճ կերպով, սնեց, մեծացրեց

Մօտիկ շրջանում իւր Պիլադ որդու,

Որ ընկերական ամենասիրուն

Կապեր հաստատեց նոր եկորի հետ:

Եւ մինչդեռ նոքա մեծանում էին

Մեծանում էր և նոցա որտերում

Արքայի մահուան վրէժն հանելուն վճռման մեջ:

ՏԵՆՀԸ կրակուած:

Եորերը փոխած, անճանաչելի
Նրանք Միկեն հասան, իբր բերելով
Օրեստի մահուան թօթը տիրական
Ու նրա ածիւնն: Թագուհին նոցա
Լաւ է ընդունում: տուն են ներս մտնում:
Օրեստն իւր քրոջ բացւում է ծածուկ.
Էլեկտրան նորից արձարծում է խիստ
Հուրը վրէմի, որ Օրեստի մէջ՝
Տեսնելով իւր մօր սուրբ ներկայութիւն
Յետ յետ էր մզուել: Նա խաղաղ կերպով
Տանում է եղբօրն այն վայրն արիւնոտ,
Ուր հայրն էր ընկել, ուր յանդգնաբար
Թափուած արիւնի մի հին ու թէթև
Հետքը տիրալի ներկում էր երկիրն
Գունատ, կատաղի վրիժու դծերով:
Իւր կրակ լեզով պատմում էր աղջիկն
Այդ սե ոճիրի մասերն առանձին,
Իւր ստրկական կեանքը խղճալի,
Ուրախ, բախտաւոր դաւաճանների
Ժպրութիւնն անշափ, ու խորթ մօր կողմից
Իրանց սպասող վտանգի մասին —
Ցանձնում է ապա զերթ եղբօրն աւանդ
Հին ու չարատանջ սուրը Տանտալի,
Որ մոլեզնաբար շատերի կեանքին
Վախճան էր դրել: Եւ որդու ձեռքով
Ընկաւ թագուհին:
Իֆիզենիա. Օ՛ դուք, աստուածներ, որ միշտ նոր ու թարմ
Ամպերի վրայ վայելում էք պայծառ
Լոյսը արեի, արգեօք նրա համար
Երկար տարիներ ինձ առանձնացրիք
Բոլոր մարդկանցից, այդքան ձեզ մօտիկ
Ինձ պահպանեցիք ու տղայական
Զբաղմունք տուիք՝ սրբազան կրակն
Անշեց պահել միշտ, ու բոցի նման

Հոգիս մշտական համեստ փայլմունքով
Չեր սուրբ կայաններն դեպ վեր հանեցիք,
Որպէս զի մեր տան սարսափներն յետոյ
Ինձ աւելի խոր զզմղ տաք արգեօք:
Դէհ, պատմիր այն խեղճ դժբախտի մասին,
Խօսիր Օրեստից:

Օրեստ. Օ՛, երանի թէ կարելի լինէր

Թշուառականի մահը քեզ պատմել:

Կարծես ամեն տեղ ցցւում է աչքին

Թափուած արիւնի միջից մօր ոզին

Ու կոչով զիմում մթին զիշերուայ

Հին աղջիկներին. «Մի թողնէք խոյս տայ

Մարդասպանն անգութ. նա ձերն է արգէն,

Բռնեցէք նրանու:

Ու սրանք լարուած ականջ են դնում

Ու անբովանդակ հայեացքը նոցա

Նրան է զառնում արծուի տենչանքով.

Եարժուում են նոքա ուեին այրերում

Ու անկիւններից կանչում են մեղմիկ

Իրանց գործակից միւս ոզիներին՝

Կատկածն ու զղջում: Ու նոցա առջե

Վեր է բարձրանում մութ Աքերոնից

Գոլորշու մի փունջ, որի ծալքերում

Թաւալ է գալիս մեղապարտ զլիսին

Տիսուր անցեալի յաւիտենական

Խորհրդածութիւնն: Նրանք կորստեան

Շնորհով օժտուած մտնում են նորից

Աստուածալուամ երկիրը սիրուն,

Որից բաժանուած, հալածուած էին

Մի հին զօրաւոր անէծքի համար:

Արագ ընթացքով վազում են նոքա

Փախչողի հետքից ու հանգիստ առնում

Լոկ այն պատճառով, որպէս զի նորից

Մարսափների մէջ թաղեն այն խեղճին:

Իֆիզենիա. Խեղճ թշուառական, զու էլ նոյնպիսի

Վիճակ ունիս արդ, և նրա նման
Խեղճ փախստական, նոյնպիսի զգացմունք
Ճնշում է հոգիդ:

Օքեստ. Այդ ի՞նչ ասացիր, ի՞նչ նոյն դրութիւնն
Իջիզենիա. Քեզ էլ է տանջում եղբայրոպանութիւնն.

Արդէն այդ պատմեց ինձ քո մեծ եղբայր:

Օքեստ. Չեմ կարող տանել, ով դու մեծ հոգի:

Որ սուտ խօսքերով խարուած լինիս դու.

Ստայօդ ոստայն թող նիւթէ օտարն

Օտարականին՝ դաւի ու հնարքի

Վաղուց վարժուած, իսկ մերը լինի

Թող ճշմարտութիւն:

Ես եմ, ես Օքեստն, որ մեղսոտ զլուխս

Շիրիմիս թեքած մաշ եմ որոնում:

Որ ամեն կերպով հաճելի է ինձ:

Ով էլ որ լինես, քեզ ու ընկերոջս

Յանկանում եմ շուտ ազատ փրկութիւն,

Իսկ ինձ ոչ երբէք:

Կարծես դու այստեղ օրդ ես քաշ տալիս

Հակառակ կամքիդ, թողէք ինձ այստեղ

Ու ձեզ փախստեան հնար փնտրեցէք:

Թող իմ անհոգի մարմինս ժայռից

Յած զահավիժուի, թող կարմիր արիւնս

Հասնի մինչև ծով ու անէծք թափի

Բարբարոսական վայրի ափերին:

Իսկ դուք նաւեցէք սիրուն Յունաստան,

Մի նոր և ուրախ կեանք սկսելու:

(Հեռանում է).

Իջիզենիա. Ո՞չ, դու, վերջապէս, իրականութիւն,

Ամենամեծ հօր դստրիկ գեղափայլ,

Հանգար իմ վրայ, ի՞նչ ահագնակերպ

Գծուում է թափով պատկերդ իմ առաջ.

Հազիւ իմ հայեացքս ընկնում է ձեռքիդ,

Որ պտուղների օրհնութեան պատկով

Խիստ ծանրաբեռնուած գանձեր է բերում

ինձ Ոլիմպոսից:

ինչպէս որ արքան իւր առատօրէն

Բաժնած նուերների չափից կիմացուի,

Ճիշտ այնպէս էլ ձեզ, խոհեմ աստուածներ,

Ճանաչում ենք մենք, ձեր երկար պահած

Խելքով ամբարած մեծ նուերներից:

Եւ մեզ պիտանին դուք դիտեք միայն,

Բաց է ձեզ դալիքն իւր լայն թևերով,

Մինչդեռ ամեն ինչ ծածկուած է մեզնից:

Լսում էք խաղաղ զուք մեր պաղատանք,

Որ տղայաբար խնդրում ենք արագ,

Սակայն ձեր ձեռքեր չեն կտրում երբէք

Չհաս ոսկեղէն պտուղն երկրային:

Եւ դժբախտ է նա, ով ձեզ չանսալով

Ճաշակում է խակ պտուղը մահուան:

Օ՛, մեծ աստուածներ, երկար սպասած,

Հազիւ մտածուած այս երջանկութիւն

Թողէք որ չանցնի, ինչպէս վախճանուած

Ընկերոջս ստուերն իզուր, ընդունայն,

Ու եռապատիկ վշաւալի կերպով:

Օրեստ. (մօտենում է նորից)

Թէ աստուածներին ներքեւ ես կոչում՝

Քեզ ու Պիլաղին օգնելու համար,

Մի՛ տար իմ անունս Թու ոճրագործին

Չես փրկի երբէք. լոկ դժբախտութիւն

Ու չար անէծքին լնկեր կըլինես:

Իջիզենիա. Քոնի հետ վիճակս կապուած է սերտիւ:

Օրեստ. Երբէք. զու թող ինձ մենակ, անլնկեր,

Գնալ դէպի մահ: Եթէ քո քօղով

Ծածկելու լինիս զու մեղապարտիս,

Դարձեալ չես կարող ազատել զու ինձ

Յարարթուն աչքից: Քո ներկայութիւնն,

Ով զու երկնային, մի վայրկեան միայն

Նրան կանջատի, իսկ վանել—երբէք:

Նոքա չեն կարող յանդուղն ոտքով

Այս սուրբ անտառի գետինը կոխել
 Բայց հեռուից ուշաւ լսում եմ արդէն
 Նոցա զարշելի քրքիջն աշարեր:
 Ինչպէս որ գայլերն սպասում են լուս
 Մառի ներքեռւմ որի վրայ անցորդն
 ելել է փրկուել, նոքա էլ զրսում
 Լուս դարան մտած ինձ են սպասում:
 Եւ հենց որ թողնեմ այս սուրբ անտառակն,
 Նոքա էլ կիջնին, թափահարելով
 Օձի գլուխներն ու ամեն կողմից
 Փռշի հանելով իրանց առաջից
 Միշտ կըհալածեն խղճուկ թշուառիս:
Իֆիզնիա. Կուզես, ով Օրեստ, բարեկամական
 Դու մի խօսք լսել:
Օրեստ. Այդ խօսքդ պահիր երկնայինների
 Ընկերոջ համար:
Իֆիզնիա. Նոքա նոր յոյսի լոյս են քեզ տալիս:
Օրեստ. Տեսնում եմ տհա, մուխ ծուխի միջով
 Մահուան դետակի դալկահար ստուերն,
 Որ ցոյց է տալիս սանդարամետի
 Պատկերն ինձ մոայլ:
Իֆիզնիա. Էլեկտրայից զատ չունի՞ս դու այլ քոյլ:
Օրեստ. Մեկին ես զիտեմ: Բայց նա՝ աւագ քոյլ
 Մեր տարարախտ տան չար սարսափներից
 Խուսափեց զնաց: Օ՛, թող հարցմունքներդ,
 Ընկեր մի դառնայ չար ոգիներին:
 Զարանենգ կերպով զրգում են նոքա
 Աճիւնը հոգուս, և չեն ցանկանում
 Որ մեր տան ահեղ, ուժզին հրզեհի
 Կայծերը վերջին մարին հոգուս մէջ
 Խաղաղ, հանդարտիկ: Միթէ առաջուց
 Դիտմամբ արձարձած ու դժոխային
 Ծծմբով սնած հուրը սոսկալի,
 Միթէ մշտապէս տանջէ պիտ հողիս:
Իֆիզնիա. Այդ բոցերի մէջ ես անուշաբոյր

Խունկեր կրցնեմ. օ՛, թող որ սիրոյ
Շունչը անապակ կրծքիդ բորբոքուած
Կրակ ու տապին հով ու զով բերի:
Օրեստ, սիրելիս, միթէ չես ուզում
Ինձ ականջ զնել: Միթէ սարսափի
Աստուածներն համայն երակներիդ մէջ
Չորցը են խոպառ կենսալիր արիւնդ:
Միթէ գլխովին կախարդուած ես զու
Գարշ Գորգոնների զազիր մոքերով.
Ո՞հ, երբ որ թափուած մօր արեան հնչիւնն
Քեզ խուլ շեշտերով զժոխք է կոչում,
Միթէ չես լսում զու այն ժամանակ
Քո մաքուր քրոջ հառաջն օրհնութեան,
Որ Ռիմապոսից ներքեւ է կոչում
Անմահ երկնայնոց քեզ ազատելու:

Օրեստ. Կոչում են, կոչում: Դու էլ այդպիսով
Կորուստդ ես ուզում: Քո մէջ վրէժի
Ոզի՞ է թագնուած: Ո՞վ ես զու, առա,
Որի ձայնն հոգիս ահարեկ կերպով
Շարժում է ուժզին:

Իֆիզենիս. Սիրտը սեփական կրտայ քո խօսքին
Ճշգրիտ պատասխան: Ես եմ: Ես, Օրեստ,
Ես – Իֆիզենիս. ողջ եմ զեռ

Օրեստ. Դու ո՞զ

Իֆիզենիս. Եղբայր

Օրեստ. Թող ինձ, թող, հեռու կաց ինձնից.

Խորհուրդ եմ տալիս, թող զանգուրներս.
Ինչպէս նրէյզէի պատկի շորերից,
Նոյնպէս էլ ինձնից միշտ զուրս է ժայթքում
Անվերջանալի կրակ բորբոքուած,
Թող ինձ, հեռացիր, Հերքուեսի պէս
Ես, այս անարժանս ուզում եմ մեռնել
Բոլորից ծածուկ, խայտառակ մաշով:

Իֆիզենիս. Դու չես մեռնելու. ուր է թէ քեզնից
Հանգստացուցիչ մի խօսք լուէր:

Յըիր կասկածներս ու թող որ բախտի
 Այս այցելութիւնն իրական լինի:
 Հսգուս մէջ կարծես անիւ է շարժւում
 Ուրախ հրճուանքի ու վիշտ ցաւերի.
 Օտարականից հեռացնում է ինձ
 Մի գաղտնի սոսկում բայց սիրտս ու հոգիս
 Ուժգին զարկերով եղբօրս է դիմում:
 Օրեստ. Տաճարն է միթէ սա սուրբ Լիէի.
 Միթէ քրմուհին անսանձ սրբազան
 Բռնուած է ուժգին խիստ մոլեգնութեամբ:
 Իֆիզենիա. 0՝ ականջ դիր ինձ, օ՝ նայիր ինչպէս
 Երկար դժնդակ օրերից յետոյ
 Բացւում է հոգիս բախտաւորութեան:
 0՝ ինչպէս կուզեմ համբոյր տալ դէմքիդ,
 Դու որ աշխարհում թանգ ես ամենից,
 Պինդ ամուր սեղմել քեզ բազուկներով,
 Որ այզքան օրեր ոչինչ չեն դրկել:
 0՝ թող ինձ, թող ինձ. զի մեծ Պարնասից
 Աղբիւրն յորդահոս այնպէս չի բղխում
 Ուրախ ու վճիռ, ժայռից ժայռ անցնող
 Խոխոջիւններով ու դէպի ոսկեայ
 Զուրը պլորւում ինչպէս այս հրճուանքն
 Ելնելով սրտիցս հոսում է կայտառ
 Ու շուրջս պատում զերթ ծով անհատնում:
 0՝ Օրեստ, Օրեստ, Եղբայր սիրասուն:
 Օրեստ. Գեղեցիկ նիմֆա, ես չեմ հաւատում
 Փաղաքշանքներիդ, դրաւիչ խօսքիդ:
 Խիստ քրմուհիներ են պէտք դիցուհուն.
 Նա իւր տաճարի սրբազղծութեան
 Վրէժ կըհանէ: Զեռքըդ յետ դարձրու
 Իմ անսէր կըծքէս:
 Եւ թէ փրկելով զու մի պատանու
 Սիրել ես ուզում նրան քնքշաբար,
 Ու գեղեցիկ բախտ նուիրել նրան,
 Ապա թող քո սէրն սիրոյ առարկան

Գտնի արժանի իմ ընկերոջ մէջ:

Նա տրտում մոլար թափառում է անդ

Ժայռերի վրայ. որոնիր նրան,

Ճանաշիր նրան ու խնայիր ինձ:

Իֆիզենիա. Աւշքի եկ, եղբայր ու ճանաշիր քո

Նորագիւտ քրոջ. քրոջ երկնային

Հրճուանքը սրտի դու մի՛ համարիր

Անխելք, անշանճար պատժական վայելք:

Օ՛, մեծ աստուածներ, հեռացրեք նրա

Յամառ աչքերից փակը ցնորական,

Որ այս գերազոյն հրճուանքի բոպէն

Երիցս թշուառ չդարձնի նորից:

Այստեղ եմ, այստեղ, վաղուց կորուսուած

Քոյրիկդ հարազատ: Դիցուհին կորզեց

Ինձ իւր սեղանից և աղատելով

Հասցրեց սեփական իւր այս սրբավայր:

Գերի ես դու աստ և մատնուած զոհի

Ու անձիղ զահիճ քոյրդ է հարազատ:

Օրեստ. Խեղջ թշուառական. Արեն այդպիսով

Կարող է տեսնել մեր հայրենի տան

Սարսափը վերջին. ուր է էլեկտրան.

Նա էլ թող մեզ հետ կորչի ու գնայ,

Որ նոր վշտերի ցանցի մէջ չընկնի:

Շատ լաւ, քրմուհի, հետեւում եմ քեզ,

Գալիս եմ դէպի սեղանը զոհի:

Եղբայրասպանութիւնն մեր չարբախտ տոհմի

Դարձել է արդէն մի աւանդական

Տիսուր սովորոյթ: Եւ զոհ եմ ձեզնից

Դուք, ով աստուածներ, որ ինձ անզաւակ

Վճռեցիք մեռցնել: Եւ քեզ, քրմուհի,

Թոյլ տուր ինձ անել, որ շատ չհրճուիս

Արե աստղերի հիասքանչ գեղով:

Արի դու ինձ հետ. ցած իջնենք դէպի

Յաւիտենական մռայլը խորին:

Ինչպէս դժոխում վիշտապներն հոկայ

իրանց ցեղակցի արիւնն են խմում,
 Նոյնպէս կատաղի մեր ցեղը դժբախտ
 ինքն իւր մէջ լուծւում կորուստ է զիմում:
 Արի, ցած իջնենք, անդաւակ, անմեղ:
 Խոր ափսոսանքով ես նայում գու ինձ. Ճաշ
 Թող այդ. Նոյնպիսի հայեացք էր ձգում կազմում
 Կլիտիմնեստրան, երբ ուղում էր իւր
 Որդուց ազատուիլ. բայց որդու բազուկն
 իջաւ նրա վրայ ու մայրը ընկաւ:
 Դէ՛չ, արի, յայտնուիր, դժկամակ ոգի.
 Երջան կազմեցէք դուք չար ոգիներ,
 Ու ներկայ եղէք ամենավերջին
 Ու սարսափելի այդ տեսարանին:
 Ատելութիւն չէր և ոչ էլ վրէժ
 Որ սրում է նրա սուրը մահաբեր,
 Այս գործն անելու ստիպուած է իմ
 Քոյրս սիրելի: Ա՛չ, մի արտասուիր,
 Դու մեզաւոր չես: Մանուկ հասակէս
 Ոչինչ չեմ սիրել այնպէս բուռն ու խիստ
 Ինչպէս որ արդ քեզ, քոյրիկ սիրասուն:
 Վեր տռ քո պողպատ, պէտք չէ խնայել,
 Կուրծքս պատառիր ու անդ փրփրազէզ
 Մեծ յորձանքներին ուղի բաց արա:

ԻՓիզենիա. Օ՛, ես չեմ կարող միոյնակ տանել
 Այսպիսի հրճուանք ու թշուառութիւն.
 Ուր ես, ուր, Պիլադ, փութա օգնելու
 Հասիր փրկելու, սիրելի Պիլադ:

ԵՐԿՐՈՐԴ ՑԵՍԱՐԱՆ.

Օրես (ուշքի է զալիս.)

Տուր ինձ Լետայի յորդ յորձանքներից
 Վերջին, կազդուրիչ մի բաժակ էլ դեռ

Անուշ զովացման. շուտով կրծքիս մէջ
Աւարտ կըստանայ կեանքի և մահուան
կոիւն ահաւոր, և մոռացութեան

Աղբիւրին յանձնուած կըհոսի հօգիս
Դէպի ձեզ, ով դուք մշուշ ստուերներ
Հաճեցէք առնել ձեր շարքերի մէջ
Ու զուարթացնել երկրի չարատանջ
Թշուառ զաւակին:

Ի՞նչ շշիւն է այս սաղարթների մէջ,
Այս ի՞նչ սօսափիւն մթնաշաղի մէջ.
Գալիս են ահա հիւրին տեսնելու.

Ի՞նչ ժողով է այդ, այդպէս փառաւոր,
Զերթ իշխանական խնջոյք հոյակապ.
Հրճուանքի դէմքով գալիս են ահա

Մեծ ու երեխայ, կին ու տղամարդ:
Նոցա վեհապանձ դէմքերը կարծես
Աստուածանման փառաւոր լինեն:
Նոքա են, այս, մեր տան նախնիքներ.
Ահա մտերիմ խօսքի են բռնւում
Թիեստն ու Ատրես, մանուկներն ուրախ
Խաղում են անհոգ, միթէ վերջացաւ
Նոցա մէջ ոխ քէն: Մարան ձայն, վրէժ,
Նման արևի վերջին շողերի:

Թողէք, որ ես էլ ձեր հանդիսաւոր
Շարքերին խառնուեմ:

Ողջոյն ձեզ, նախնիք, բարեւում է ձեզ
Զեր զաւակն Օրեստ, ձեր հին սերունդի
Ընձիւղը վերջին, ձեր ցանած սերմերն
Հնձում է նա արդ: Անէծքով ծեծուած
Իջնում է ձեզ մօտ, բայց այստեղ կարծես
Հեշտ է ամեն բեռ,

Օ՛, ինձ էլ առեք ձեր շրջանի մէջ.
Յարգում եմ, Ատրես, քեզ էլ, ով Թիեստ,
Բոլորս էլ այստեղ զերծ ենք հին ոխից:
Ուր է հայրս անուշ, որին կեանքիս մէջ

Մէկ հետ եմ տեսել: Դու ես այդ, հայր իմ
 Մօրս հետ ես գալիս զու ընկերովի:
 Թէ կլիտեմնիստրան քեզ ձեռք է մեկնում,
 Օրեստն էլ ապա կարող է նրան
 Մօտենալ, ասել. «Նայիր քո որդուն,
 Զեր որդին եմ ես. մաղթեցէք նրան
 Դուք բարի գալուստ. աշխարհի վրայ
 Մարդասպանութեան ողջոյնն էր մեր տան
 Բարեկի նշան. և ծեր Տանտալի
 Սերունդը դժբախտ հրճուանք կըդտնէ
 Դիշերուայ խաւար տէրութեան մթնում:
 Դիմում էք ահա ինձ ողջոյններով
 Եւ ուրախութեամբ ձեր մէջ ընդունում:
 Ո՛չ, տարէք ինձ իմ ծեր նախահօր մօտ.
 Ո՞ւր է ծերունին, թոյլ տուէք տեսնեմ
 Նրա թանգաղին զլուխն յարգելի,
 Որ երկնայնոց հետ խորհրդի է նստում.
 Յապաղում էք դուք, երբո էք դարձնում:
 Ի՞նչ է դա, միթէ տանջւում է սաստիկ
 Աստուածանման այդ մեծ ծերունին.
 Ո՞վ վայ ինձ, վայ ինձ, դժոխային ոգիք
 Տանջում են քաջի կուլծքն հերոսական,
 Ու պինդ շղթայում պողպատ կապերով:

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Օրեստ, Խթիգենիա, Պիլադ.

Օրեստ. Է՞՞չ, դուք էլ արդէն ցած իջաք ինձ մօտ,
 Դէ՞չ շատ լաւ. քոյլ իմ, ուր է կլեկտրան.
 Թող բարի աստուածն մեղմիկ նետերով
 Նրան էլ բերի խառնի մեր շարքին:
 Ափոսում եմ քեզ, իմ թշուառ ընկեր,
 Դէ՞չ արի, արի. իջնենք Պլուտոսի
 Գահը խաւարի, իբրև նոր հիւրեր
 Ողջոյն տանք նրան:

Ի ֆիզենիա. Ով աստուածային զոյդ քոյր ու եղբայր,
 Դուք, որ երկնքից զրկում էք մարդկանց
 Օր ու դիշերուայ լոյսը փառաւոր,
 Մեռածի համար փակուած էք ընդ միշտ,
 Ինձ էլ փրկեցէք անդին եղբօրս հետ:
 Երկնի երկրի մէջ բոլորից աւել եղբօրդ զի՞ն
 Եղբօրդ ես սիրում, քնքոյշ Դիանա՛.
 Եւ քո կուսական դէմքով միշտ դառնում
 Նրա յարափայլ լոյսին անըստուեր:
 Ո՞չ, թող ուշ զտնուած եղբայրս իմ անդին
 Չթաղուի մռայլ խաւարի միջին.
 Եւ թէ ինձ համար քեզնից սահմանուած
 Եկել է հասել րոպէն ազատման,
 Ու մեզ փոխագալձ օգնականութեամբ
 Վճռել ես փրկել կապ ու կապանքից, —
 Ազատիր շուտով մեզ այն մշտական
 Անէծքի կապից, ու չըսըլանայ
 Ազատման համար ժամը թանգագին:
 Պիլար. Ճանաչում ես մեզ և այս սուրբ անտառ,
 Այս լոյսը պայծառ, որ մեռելներին
 Բնաւ չի փայլում
 Զգում ես քրոջդ, ընկերիդ բազուկ,
 Որ քեզ պինդ ամուր սեղմում են պահում:
 Արի պինդ բռնիր, ստուերներ չենք սին,
 Ուշք զիր իմ խօսքիս, լաւ հասկացիր ինձ.
 Ուշքը հաւաքիր, թանկ է մեզ համար
 Ամեն մի վայրկեան. և մեր վերագարձն
 Կախուած է թելից, որ սակայն կարծես
 Մի բարեյաջող ձեռքով է հիւսուած:
 Օքստ (Ի ֆիզենիային)
 Առաջին անգամ թոյլ տուր քո գրկում
 Բաց առձակ սրտով վայելեմ հրճուանք:
 Ո՞վ դուք աստուածներ, որ բոցոտ ուժով
 Թուխպեր էք կուտում երկնի կապոյտում,
 Ու երկար ժամեր անձրեն սպասուած

Գոռ որոտներով ու քամու կոչով
Վայրի հոսանքով թափում էք երկիր,
Բայց շուտով մարդկանց վեհերոտ յոյսերն
Ու յանկարծահաս վախկոտ ապշեցում
Ուրախ գէմքերի ու բարձր ձայնով
Ենորհակալութեան էք փոխակերպում,
Երբ որ թարմացած ճիւղերի միջով
Նորոգ արեգակն հազարապատիկ
Փայլում է պայծառ մաքուր հայելու մէջ,
Ու պճնուած իրիսն իր թեթև ձեռքով
Յրում է եղինից ամպի կտորներ—
Թողէք որ ես էլ քրոջս գրկում
Էնկերիս կը ծքին վայելեմ ձեր բարիքն
Ու լիքը սրտով ձեզնից գոհանամ:
Քանդուում է անէծքն—այդ է սիրոս ասում.
Լսում եմ ահա, Տարտար են իջնում
Ոզիներն անգութ, իրանց յետեից
Պողպատէ գոներն ազմուկով փակում,
Ելնում է երկնից բուրմունք զովարար
Ու գրաւում ինձ իւր տափաստաններն,
Կենսուրախ կեանքի մեծ գործի համար.
Պիլադ. Էլ մի ուշացնէք բոպէներն հաշուած.
Մեր առագաստներն ծածանող քամին
Առաջին անգամ թող Ոլիմպ տանի
Մեր սրտի հրճուանք . . .
Դէշ, եկէք գնանք, խորհենք, մտածենք
Մեր ազատութեան ուղին փրկարար:

θωρακ. qbrif.